

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՏՐՏՈՒՄ ԵՒ ԱՐԻՒՆՈՏ ՕՐԵՐՈՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Օրերը, որոնք Պաղեստինի ողբերգութիւնը կազմեցին եւ սակաւին կը շարունակեն մնալ, իրենց տրուած, արիւնոտ եւ խոր անգրագարնը ունեցան, ինչպէս բովանդակ Պաղեստինի, նոյնպէս եւ Սուսապի միջ չայ հասարակութեան վրայ:

«ՄԱԿ»ի կողմէն Պաղեստինի բաժանման որոշումը զգոն կը բողոք առաքական եւ կիրներ ընդհանրապէս եւ Պաղեստինի աւար բնակչութիւնը մասնաւորաբար: Միւս կողմէն իր վերջաւորութեան կը մօտենար անգլիական հոգաւարութիւնը: Հրեաներն ու արաբները տեղաբնակ պատրաստութիւններու էին թուած զենի ուժով պատշաճանելու հաւաք իրենց իրաւունքները: Ոչ ոքի համար զայտնիք կը մնար այն արիւնոտ տրամադր կը պատրաստուէր Պաղեստինի երկըս սրբազան հողին վրայ: Միւս կողմէն սակայն ոչ ոք կրնար կուսնել այն՝ ինչ որ պիտի ըլլար, այն՝ ինչ որ եղաւ եւ կազմեց Ս. Սերիի ողբերգութիւնը: Հակառակ օր ամիսներէ ի վեր երկուսեք եղած արիւնոտ ընդհարումները թխուր հեռապակներէն կը մզէին մեծող եւ զգացող հոգիները, միւս կողմէն, թէ երկուսն են եւ թէ դուրս, տարած լաւատեսութիւն մը կար, որ կ'օրէր բոլորս լաւագոյն անկեղտութիւններով եւ կամ զեքնուազագոյն շարիներու գինով: Հոգեբանականօրէն այսպէս կուգան ողբերգութիւնները, կ'զգացնեն ինքզինքնին մեղի, կը հալին մեր հոգիին, կը նետեն մեր մէջ իրենց միջաւանջին մօտեը, եւ ապա կ'օրօրեն մեր միտք անսոյոյ փոխ յարաբերութեամբ մը, լաւատեսութեան եւ յոռետեսութեան մօտեցնական պայտարով:

Բազմաթիւ մահերով սակաւին կենդանի մեր ժողովուրդին բնագոյն այս անգամ եւս սակայն չէր սխալած, եւ արիւնոտ ընդհարումներէն եւ իր վրայ գալիք ողբերգութիւններէն առաջ, Սուրբ Քաղաքին մէջ տնտեսական, ան իր գոյները հաւաքած կուգար ապաստան եւ ապաստան գտնելու Սրբոց Յա-

կոբեանց դարաւոր ու սուրբ կամարներուն տակ: Աւելի քան 3000 հոգիներ ժողովուրդի հայրերէն ամիսներ առաջ եկեր եւ հաւատաւոր էին վաճառք ու լեցուցեր հաստատութեան կարեւոր բոլոր պատշաճութիւնները: Նոյնին մէջ, Սրբազան Պատրիարք չայր եւ վաճառք վարչութիւնը զգալով գալիք դժբախտ օրերու բերումը, առաջին մէկ օրէն կազմակերպեցին ժողովրդային գործիչ յանձնախումբեր գլխաւորութեամբ հոգեւորականներով, եւ սկսան գործի: Կազմուեցան, Պաղեստին, Սուրբ Քաղաքին եւ Առաջնապետին մարմիններ, որոնք Նորին Ամենապատեհութեան շնորհիւ կը տեսնուէր հոգաւարութեան ներքին, ըրին իրենց կարելին, անհեղեկի հայրապետին, առողջապահական պիտիւններու եւ ներքին ու արտաքին ընդհանուր հրակարարութեան ու կարգապահութեան գործը յաւաք ծանելու:

Կազմուեցան նոյնպէս հանգանակիչ մարմիններ, գոյացնելու համար թէեւ անբաւարար, սակայն անհրաժեշտ դրամաւորութիւններ ընդհանրին եւ ղեկօրէից նախաձեռնողները: Նորին Ամենապատեհութեան Պատրիարք չայր նախագահով գալիք օրերու ծանուցութիւնը դիմեց Նորին Ս. Օմարին Գաւառին Վեհապետին, Հ. Բ. Ը. Միւսերէն եւ եղիպտոսի առաջնորդութեան եւ ղաղութիւն, խընդրելու կարեւոր օժանդակութիւնը Պաղեստինի հայ ժողովուրդին համար, վերահաս եւ սակաւ հասանելի վստահութիւն ու բուռնութեան դիմ:

Մայիսը կանխող հինգ ամիսներու քննարկներ, երբ Պաղեստինի մէջ կը շարունակուէր սակաւին անգլիական հոգաւարութիւնը, երկուսեք եղած բեմաւարտ ու տալիսութիւնները գլխաւոր քաղաքներէն դուրս կարգ մը սամանազուլի կազմող զիւրերու եւ դիրքերու տուրջ կը կեդրոնանար գլխաւորաբար. քաղաքային ընդհարումները յանձնարարէին չէին, եւ ըլլաւ պարտաւոր իր իրաւունքներէն առհասարակ անգլիական ուժերու կողմէն:

Հին տարածով մեր զատկուան օրջանը կ'անցնէր առանց լուրջ եւ արտակարգ դեպքերու: Թէեւ Արաբական շունչին, սակայն վաճառք լեցնող հոն բազմութիւնը կ'ստանար եւ կ'ստանար հանգիստաւորութիւն մը կը բերէր աւազ օտարութեան արտադրութեան:

14 Մայիսին Սրուսալիմ քաղաքն ու քր. զակալքը իր հսկողութեան ներքեւ ունեցող անկլիական գինուորական ուժերը կը քառուէին եւ պաշտպանութեան գօտիները կը մնային մէկ կողմէն արաբներու ու միւս կողմէն հրեաներու հսկողութեան տակ, ուրուն պաշտպանութեան կը սկսէր բռնուիլ եւ կառավարչական կողմէն, իրարու ձեռքէն խլելու ռազմագիտական յիշեալ դիրքերն ու գօտիները: Վանհատներ ճաղափայտ հայ հաւատարմութիւնը որ ցարդ չէր լիւծ իր կայքը, եւ ներքին ուժերը հսկողութեան մը շնորհիւ գիշերային եւ թուրքիստան իր պաշտպանութիւնը կ'ընէր, գինուորական դիրքերու եւ հսկողութեան այս բարձունքին պաշտպանութեան կը մասնակցէր, եւ բովանդակ բընակչութիւնը հազիւ իր անհրաժեշտ առանձնիկ կը լեցունէր, որովհետեւ այդ քաղաքը հրեաներու եւ արաբներու միջեւ սահմանադրութիւն կը վերածուէր:

15 Մայիսին վերջ կը գտնէր անգլիական խնամակալութիւնը, եւ քաղաքի բոլոր գրեթէ կոնստանտինուպոլսիս քաղաքային կառավարչական շէնքերուն, շէնքերուն, շէնքերուն եւ մասնաւոր հիւրանոցներուն խնամակալութեան կը փոխանցուէր: Բնակչութիւնը խնամակալութեան կը փոխանցուէր, որոնք ստորապի եւ մահուան կը մասնակցէին ամբարշտութիւն ի վեր արդէն հալածուած եղած ժողովուրդը:

16 Մայիս, Կիրակի օրուն կրկնապէս անուշ առաւօսը կը բացուէր հայոց վանքի մէջ տեղի ունեցող սխուր ու արիւնց տեսարաններուն վրայ: Տեղացող հիւրերէն եւ ուղևորներէն կ'անցնային բազմաթիւ փրահուրներ եւ հանգումներ: Միջազմ Պատրիարք Զայր անձամբ դիմումներ կատարեց քաղաքի իշխանութեանց եւ միջազգային մարմիններ կազմակերպչներուն, աղբիւրներով որ խնամքով վանքին, եւ անոր կամարներուն տակ ծուարած խեղճ ժողովուրդին: Սակայն բոլոր դիմումները կը մնան ապարդիւն, որովհետեւ կեանքի եւ մահուան պայքարը միջոց գազանացած ամբողջին արմատաւորութիւնները կը մնային անզուպիլ:

Կեսօրէն վերջ աւելի բռնուի կերպով կը տարուակալուին այս ընդհարումները եւ կը տեղան դռները: Հայոց վանքը այլեւս անմասնագիտելի եւ դիմելի երկու կողմերու պայքարին, ու այդ իսկ պատճառաւ հրազեններու եւ ուղևորներու տեղափոխութեան անպակաս

իր վրային եւ սահմաններէն: Կեսօրէն վերջ, պատահականօրէն պայքար չուրէր մը զոհ կ'երթան Սահակեանները, այդ ու կին միասին:

Նկարագրութեան վեր կը մնայ զանազան ու յուսահատ վիճակը որ կը տեսնուէր ներս: Գործի վրայ է մեր բովանդակ երթաւորները, որ ամբարշտութիւն ի վեր արդէն իր գիշերային եւ ցերեկային աշխուրջ հրահրողութիւններով կը ջանար առաջը առնել վանքին ներս եւ դուրս եղած բոլոր ներքին անկարգութեանց եւ պատահարներուն: Գործի վրայ է Ս. Արքեպիսկոպոս Կաթողիկոս, Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան, ի գլուխ կարգապահական մարմին, որ շնորհիւ իր փորձ եւ կրօն գործունեութեան եւ աշխուրջութեան ու երկուսեւ կատարած դիմումներուն՝ տաս բան պիտի պակսեցներ Հաստատութեան ըստպատկար զանգեւ:

Մայիս 17-18 արիւնքի, սուգի եւ տեսարաններուն տեսնուած բովանդակ Սիւրբանուրէն եւ հայ հասարակութեան համար: Հրեանց կողմէն եղած ռազմականութեան վանքին վրայ, թէ իրենց տեսութեան եւ թէ պատճառած վնասներուն համեմատութեամբ՝ իրենց ծայրահեղութեան հասան: Այս երկու տեսութեան ընթացիկ կ'անցնային 36 վրահուրներ, որոնցմէ 3ը կը վախճանէին իրենց վերջերս ծանրութեանը պատճառաւ:

Նորին Ամեն. Ս. Պատրիարք Զայր եւ բոլոր անգամ ըլլալով, արցունքով ու պաշտօնական, դարձեալ կը դիմէ պատկան իշխանութիւններուն եւ Միջազգային Կարմիր Խաչի կազմակերպութեան, խնդրելով որ խնամքով այս շարիքը, որուն այժմ գլխաւոր բիրտիւրը կը համակարգուէր հայոց վանքը:

Հոս մասնաւոր յարգանքով եւ երախտագիտութեամբ պէտք է յիշել վանուց Կարմիր Խաչի գործունեութիւնը, երկու տեսերի կազմուած, որ իրենց գլուխը ունենալով Տոքթ. Գրիգոր Տալաշեանի եւ Պր. Բիւզանդ Սեմեդեանի մահէն փորձ ու պատճառական անձեր, եւ Տիկին Վարդուհի Մարտիրոսեանի եւ Տիկին Խաթուն Գեօրգիւհեանի պէս աղքատական հոգիներ, գրեթէ ու ցերեկը իրարու խառնած, արցունքով ու ժպիտով պիտի խնամէին աւելի քան 200 վրահուրներ, որոնցմէ 65ը օտար, եւ պիտի դարձանէին 373Պ խնամքի կարօս վերջեր:

Նրա հայոց վանքն ու ժողովուրդը մահուան ճակատագրին ու արիւնքին խելայեղ իր

սափահար եղածներէն, եւ մտահոգ զայի՛ք օրերու անսոյգ վիճակէն: Իսկ մնացեալ մասը կը շարունակէր մնալ վանքէն ներս եւ վանքամերձ քաղերու մէջ:

Մայիսի կեսէն սկսեալ չհաւոր դասակարգին կը բաժնուէր հաց եւ կերակուր, Պարենաւորման յանձնախումբի հսկողութեան ներքեւ, նախազանութեամբ Ս. Արուստյան մատակարար Հոգ. Տ. Միւռնի վրդ. Կրնիկեանի, որ ամիսներէ ի վեր սրագին ու ամիսնոց փարսումով կը շարունակէ բազում դժուարութիւններ պահանջող բարիքի այդ գործը, առարկայ բոլոր նպատաւորեալներու օրհնութեան եւ սրագին շնորհակալութեան:

ՅՈՒՆԻՍ

2 Յունիս, հին քաղաք Այն-Ֆարայէն շուր բերելու խոստումով, Սրուսաղէմի քաղաքապետարանը Նորին Ամենապատուութեան դիմեց նուիրատուութեան մը խնդրանքով: Ս. Արուստյան ուրիշ հաստատութիւններու կարգին, Լ. Պ. 100 ոսկի նուիրեց յիշեալ նպատակին:

3 Յունիս, կես գիշերէն մինչեւ լոյս սաստիկ ուժեղանումով սեղի ունեցաւ: Նոյն օրը Պէյրութի Հ. Բ. Ը. Միութեան յանձնաժողովի կարգադրութեամբ, Տոբ. Բիւզանդ Դրիգորեանը Պէյրութէն Սրուսաղէմ հասաւ, վանուցս դարձանաճան մէջ ծառայելու համար: Ցարգելի բժիշկը զգբայտաբար միայն երկու ժամքներ մեր մէջ անցուց, սակայն այդ ժամանակաշրջանին բնաւ իր լաւագոյնը օգտակար բլլալու համար վիճաւորներուն եւ հիւանդներուն:

Ցարգելի Տոբ. իր հետք կը բերէր նաեւ Հ. Բ. Ը. Միութեան եւ բազմաճեղք ու ազնւական Տոբ. Ճիսէնեանի դէպքերից նուէրը, ինչպէս նաեւ կարգ մը անհրաժեշտ գործիքներ նուիրուած նոյն ազնուամեծար Տոբ. Ճիսէնեանի կողմէն:

Այսօր ընդունեցանք շնորհակալութեամբ նոյնպէս Սփիւսոսի Գեր. Առաջնորդ Մբազանի կողմէն զրկուած գեղարեւոյ մթերք: Բոլոր այս նուիրատուութեանց եւ նուիրուող եւ նուիրող պատուանդան հոգիներուն հոս յսնուն Նորին Ամեն. Մբազան Պատրիարք Հօր կը յայնմենք մեր խորին շնորհակալութիւնները եւ մերազն ժողովուրդի շնորհաշնորհախաղաղութիւնը:

Յունիս 6, Իսթի Վան. խնամակալը Ապստոլիկա այսօր Ս. Յարութիւն այցելեց իր

հետեւորդներով, եւ ընդունուեցաւ ճանապարհներս երեք պատրիարքութեանց ներկայացուցիչներու կողմէն:

Ս. Յարութեան մէջ, մեր հետեւորդ զպօքի եղբայրները օգտուելով տրոյղ աննպատակացութենէն, Ս. Յարութեան իրաւանց վերաբերեալ կարգ մը ոսնձգութիւններ փորձեցին, սակայն պատրիարքարանիս կողմէն ձեռք առնուած ազգու միջոցներուն շնորհիւ՝ անոնց ապօրէն մտադրութիւններուն վերջ տրուեցաւ, որոնք անդրադառնալով յետի իրենց այս ճգնի արարքին, եկան ներողութիւն խնդրելու Նորին Ամեն. Մբազան Պատրիարք Հօրմէն:

10 Յունիս, Համբարձման նախաօճակին ու հանգիստութիւնը այս տարի փոխանակ Համբարձման լիւրան վրայ, Ս. Յակոբեանց ճանապարհ մէջ պատուեցաւ: Պատարագի միջոցին վայելուչ հանգիստաւորութեամբ կատարուեցաւ նոյնպէս Հայրապետական մուրաբանք Ս. Էջմիածնի, Նորին Ամեն. Մբազան Պատրիարք Հայրը խօսեցաւ շատ սրագին, բարոյ մը, մեկնելով ներկայ կացութենէն վեր առաւ մեր եկեղեցւոյ եւ մեր ժողովուրդին հոգեկան կեցուածքը այս կարգի իրողութեանց դեմ դարեւոր եւ պատահականութեանց ընդմէջէն:

15 Յունիս, կը կարգադրուի միւլ ամսւան զինագլուխ, որու ընթացքին բովանդակ Սրուսաղէմի եւ մեր ճնշուած ու սարսափահար ժողովուրդին պատենդութիւն կը տուի իր մը հանգիստ տունը քաղաքին:

Յունիս 17ին, Ս. Արուստյան միաբաններէն Յովակիմ տեսուչ Հոգ. Տ. Բաբգէն վրդ. Ապասեանը Պէյրութէն Սրուսաղէմ կը վերադառնար, ուր գացած եւ դէպքերէն առաջ իր եղբոր ամուսնութեանը ներկայ գտնուելու համար:

20 Յունիս, տօն Հոգեգալտեան, որուն նախաօճակ ու հանգիստ կը կատարուէր նոյնպէս Ս. Յակոբեանց ճանապարհ մէջ, փոխանակ Ս. Փրկչի եկեղեցիին մէջ, որ այժմ իբրեւ դիրք կը ծառայէ հրէից:

Ահա երկու տօնում եւ՝ արխանոս ամիսներու տօն հակիրճ յուշագրութիւնը: Վերջի յիշեցինք այս դէպքերու առիթով մեր վիճաւորներու թիւը եւ անոնց հանգիստ եղած զարմանումն ու հոգատարութիւնը: Հոս խորունկ ցաւով կը յիշատակենք նաեւ մեր մահերը: Ս. Յակոբի միաբաններէն Յարութիւն

Առասուրեան՝ Խարբերդցի, 60 օտեկան եւ Աւեսիք Բոլասեան՝ Սոզլասցի, 60 օտեկան: Մայիս 14-31 Սոուսալիմի մեր հասարակութեան զգալի մասը ունեցան կորսնցնելու Տիկին Աննա Պիտեւեան 40 օտեկան, Սահակ Սահակեան 30 օտեկան, իր կողակիցը Տիկին Տիմանդ Սահակեան 27 օտեկան, Գեորգ Գեորգեան 15 օտեկան, Զաւար Զաւարեան 22 օտեկան, Արմեն Գովսեփեան 65 օտեկան, Անահիտ Ուննեան 8 օտեկան, Յարութիւն Տարդրեան Ասանցի 60 օտեկան, Հայկ Սանրգեան Սրգնկացի 50 օտեկան, Նայի Թուրայեան 15 օտեկան, Մարագի Փարամազ 35 օտեկան: Սահայի եւ շրջակայից մեզ ցարդ մեր ունեցած անդէկութեանց համաձայն մեռած են՝ Յովսէփ Շահինեան 26 օտեկան, Կարապետ Յակոբեան (Ներկարար) 55 օտեկան, Քեաւացի Կարապետ կոչուածը 25 օտեկան եւ Վահրամ Տեր-Սահակեան 55 օտեկան:

Հայֆայի մեջ, սպանուած են հետեւեալները. Նուպար Մոմեան, Մանուիլ Մանուկեան 38 օտեկան, Յակոբ Այնթապեան 24 օտեկան, Պ. Պաղչեան Լանցնի երեսասարդ մը, Պ. Աւագեան Այնթապցի երեսասարդ մը: Վերոյիւսեալ ճնշեցեալներուն կը մաղթեն հոգիի խաղաղութիւն, իսկ մեր օտաւապող ժողովուրդին գալիք եւ ճոշ օրեւորութիւնները:

ՀԵՌԱԳԻՐ Ս. ԷԶՄԱՍՏԵՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Ս. Զատիկի ժողովուրդական հեռագիրը ուղղուած Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

«Սրտագին շնորհաւորանքներս Գրիստոսի Յարութեան մեծ տօնի առթիւ Ամենապատուութեանդ եւ Միաբանութեանդ Հոգեւոր Դասին եւ մեր սիրեցեալ հօտին. Հայրապետական օրհնութիւնս եւ բարեմաղթութիւններս»:

ԳԷՈՐԳ Զ.

Ի՞նչ քարիք եւ այս ատենդական վիճակէն ազատութիւն:

Գործող Յանձնախումբեր

Ա. — Տնօրէնացի Մարմին
ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՅՐ Նախագահ
ԳԵՐ. Տ. ԵՂԻՇԷ ՎՐԴ. ՏԵՐՏԵՐԵԱՆ Ասեմապետ
ՀՈԳ. Տ. ՍՈՐԻՔԵ ՎՐԴ. ՔԷԶԱՍԷԱՆ Անդամ
ՀՈԳ. Տ. ՆՈՐԱՅՐ ՎՐԴ. ՊՕՂԱՐԵԱՆ
ՏՈՔՔ. ԳՐԻԳՐ ՏԱՂԼԵԱՆ Ասեմապետ
ՊՐ. ՆԿԻՂՈՍ ԶԱԳՍԱՅԷԱՆ Անդամ
ՊՐ. ՍԱՀԱԿ ՍԱՀԱԿԵԱՆ
ՊՐ. ՎԱՐԳԱՆ ՏԵՐ-ՎԱՐԳԱՆԵԱՆ Քարտուղար

Բ. — Կաղապարական Մարմին
ՀՈԳ. Տ. ՀԱՅՐԻԿ ՎՐԴ. ԱՍԼԱՆԵԱՆ Նախագահ
Անդամ

ՏԻՍՐ ԶՈՎԱՆՆԵՍ ՌԻՆԷԱՆ
» ՍԱՐԳԻՍ ՊԱՆԵԱՆ
» ԼԵՒՈՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ
» ՍԻՄՈՆ ԿԻՒԼԷՄԵՐԵԱՆ
» ԳԷՈՐԳ ԳԱՐԵԼԵԱՆ
» ԱԼԵՔՍԱՆԴ ԵՂԱՍԷԱՆ
» ՀՐԱՅՐ ԵՐԱՅԷԱՆ
» ԶԱԿՈՐ ԶԱՔԵԱՆ

Գ. — Պարենաւորման Մարմին
ՀՈԳ. Տ. ՍԻՒՈՒՆ ՎՐԴ. ԿՐԺԻԿԵԱՆ Նախագահ
ՏԻՍՐ ԶՈՎԱՆԷՔ ԵՆՕՇԵՒԵԱՆ
» ԳԱՐԻԿ ԳԱՆԶԷԱՆ
» ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՐԵԱՆ
» ԱՐԱՍԱՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ
» ՏԱԶԻՔ ԳԱՍԱՊԵԱՆ

(Եւր.)

Նորին Ս. Օծուծիւն
Տ. Տ. Դէորդ Զ. Սրբազնագոյն Կաթողիկոս
Ամենայն Հայոց
Ս. Էջմիածին Երեւան

«Զերդ Ս. Օծուծեան կը մատուցանենք մեր եւ մեր Միաբանութեան ինչպէս նաեւ հաւատացեալ հօտին սրտագին շնորհաւորութիւններ Ս. Զատիկի առթիւ, մաղթելով Զերդ Սրբութեան երջանիկ արեւշատութիւն եւ Հայց. Եկեղեցւոյ անասանութիւն եւ մեր սիրեցեալ Հայրենիքին ու ժողովուրդին բարգաւաճութիւն»:

ԿԻՐԻՆԴ ՊԱՏՐԻԱՐԺ
Ս. ՍԵՐԱՍԱԳԷՍԻ

Պատմութեան ինչպէս նաեւ իրենց շահեկանութեանը համար հոս կը գետեղենք կարգ մը հայերէն եւ անգլիերէն նամակներ եւ պաշտօնագրեր, որոնք կ'անդրադարձեն Պաղեստինի տրտում օրերը եւ Ս. Աթոռոյս ներքին կեանքի կարգ մը իրադարձութիւնները:

**HIS EXCELLENCY
THE HIGH COMMISSIONER FOR PALESTINE,
GOVERNMENT HOUSE,
JERUSALEM.**

Your Excellency,

We, the undersigned spiritual Heads of the Christians and Guardians of the Holy Places, request Your Excellency kindly to transmit the following message, resulting from a meeting of representatives of the Orthodox, Latin, and Armenian Churches, assembled at the Orthodox Patriarchate to-day on the Eastern Good Friday in the Holy City of Jerusalem, to His Majesty's Government in London, and the United Nations Organization, for the information and immediate action of the Security and Trusteeship Councils.

2. Perturbed by the present situation in Palestine, and basing our request on incidents, which have already occurred necessitating the withdrawal of our Ecclesiastic guardians and priests from our Institutions and Religious Establishments in Tiberias and Haifa: and the fighting to-day around the Orthodox Monastery and Church of St. Simeon in Katamon, Jerusalem, we emphasize our fears as to the security and respect of the sanctity of the Shrines and Places sacred to all Christians of the world regardless of confession. We appeal to those organizations now deliberating on the future and security of the Holy Land to take very urgent and immediate action to ensure the safety and security of all Christian Sanctuaries in Jerusalem and throughout Palestine.

3. Further, we request that definite steps be taken immediately in order to ensure that on the termination of the British Mandate there shall exist an authority capable of ensuring the practical administration and good government of Jerusalem and its environs including Bethlehem, Mt. of Olives, and Ain Karem.

With best wishes and the assurance of our distinguished consideration,

We remain,

Yours faithfully,

Jerusalem,
30 April, 1948.

Guregh II
Armenian Patriarch
of Jerusalem

P. Alberto Gori
Custos of Terra Sancta

Archbishop Athenagoras
for the Greek Orthodox Patriarch
of Jerusalem



ԱՐՄԵՆԱԿԱՆԱՊՈՍՏՈՆԻԿԱՆ
ՊԱՐԻԱՐԿԱՆ ԵԿԵՔԵՐԱՆՈՒԹՅԱՆ
ԵՐՈՒՍԱԼԵՄ

ARMENIAN PATRIARCHATE
JERUSALEM

No. 5665/17

Երուսաղիմ,
Jerusalem, 10 June 1948

TO

THE SECURITY COUNCIL
UNITED NATIONS ORGANIZATION
NEW YORK

We the undersigned, Armenian Patriarch of Jerusalem have the honour to bring to your notice that since the 15th of May 1948 the Basilica of the Holy Sepulchre of Jesus Christ and other Holy Places within the walls of the Old City of Jerusalem and its environs as well as Cathedrals, Churches, Monasteries, Convents, Educational and Charitable Institutions within the same area have been bombarded with mortar shells and riddled with bullets and grenades seriously damaging several of them.

We therefore appeal to you most earnestly to take urgent steps which would ensure the protection and safety of the Holy Places and sacred Institutions in Jerusalem and throughout Palestine.

Guregh II
Armenian Patriarch
of Jerusalem.

5435/17

16 Մարտ 1948

Ազնուաւումի Տիմր Գ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Ազնուաւումի Տեղեկ Զ. Բ. Բ. Մ. Կեդրոնական Վարչութեան
Ի Նիւ-Եորք (Մ. Ն.)

Ազնուաւումի Տիար,

Պապեսինի ներկայ քաղաքական զարգացումը իր համաժամանակեան պայմաններով եւ արհաւիրքներով պատճառած է նաեւ Ս. Աթոռս իր Միաբանութեամբ, իր բնութեամբ, իր կրօնական եւ կրթական բոլոր հաստատութիւններով եւ արժեքներով:

Յետ-պատերազմեան ճնշման հետեւեալ ժողովուրդներու վրայ բարդուած այս անակնկալ ու ծանրակշիռ կացութիւնը լուրջ մտահոգութիւններու մասնաւոր բնուէն է կը զգանք թէ առանձին պիտի չկրնանք դիմագրաւել թէ Ս. Աթոռոյս եւ թէ ժողովուրդի պահանջած բացառիկ զոհաբերութիւնները միաժամանակ:

Հետեւաբար լսուած մեր նուիրական հաստատութեան եւ մեր սիրելի ժողովուրդին կը դիմենք Ձեզ եւ Պատ. Կեդրոնական Վարչութեանը եւ կը խնդրենք Ձեր աջակցութիւնն ու դրամական անմիջական օգնութիւնը վերահաս պայմաններէ փրկելու Հայութեան պանծալի ժողովուրդները եղող Ս. Յակոբեանց Ս. Աթոռն ու անոր ազգային մեծ արժեքները եւ ապահովելու մեր Միաբանութեան եւ ժողովուրդի սնունդը գալիք մի քանի ամիսներու ստատիստիկայով ընթացքին:

Աւելորդ պիտի ըլլար բոլոր զարգացող պատճառները ինչպէս նաեւ այն հսկայ աւելումներ որոնք ցարդ գործուած են: Այդ մասին Ձեր սիրելիութիւնը, Պատ. Վարչութեանը իրականաբար տեղեկութիւններ ունիք արդեւ եւ կ'ունենաք ամեն օր հայ եւ օտար մամուլի

հեղեղ, ինչպես նաև եւրոպական եւ ամերիկեան ձայնասփիւռի կեդրոններէն: Մեր կողմէ պէժ կը տեսնենք աւելցնել միայն քէ կեանքի եւ ինչի կորուստները շատ աւելի մեծ են, քան ինչ որ մամուլը եւ ձայնասփիւռը կ'ըսէ են ներկայացնել եւ եթէ Տէօ մի արագած մի քանի ամիսներ եւս շարունակենք անոնք հիմնադրական պիտի կործանենք անցեալ 30 տարիներու շինարարական եւ ընդհանուր յառաջդիմութեան աշխատանքներն ու արդիւնները:

Շրջապագեծուած անողոք ու կասողի պայքարը կեդրոնացած ըլլալով հաղահներու եւ անոնց տարուածանքներու մէջ, ծանրապէս ազդած է մեր ժողովուրդի բոլոր խառնուրդը՝ խորհակելով անոնց պարտասփ բոլոր միջոցները: Անոնցմէ շատեր դժոխային մեկնանքներ, ռուսներու եւ մեծ ու փոքր հրազեններու սարսափներէն խուճապահար լիւծ են իրենց տուներն ու շարժական բոլոր ստացուածքները եւ իրենց զաւակներով ապաստանած են մեր կրօնական հաստատութեանց պարիսպներէն ներս: Բացի նիւթական այս կորուստներէն ցարդ ունեցած են 15 զոհեր:

Նրուստի մի Յաղաբեանց վանքը իր ներքին եւ արտաքին քաղաքով, Հրեշտակապետաց, Բերդիներ, Ռեմիլի եւ Յուլի վանքեր եւ Հայկայի ժամատունը լեցուած են ամեն դասակարգի ապաստանակներով, հաւասարապէս վստահուած եւ յուսովուած:

Ս. Արքուշոյս նիւթական վանքները եւ դրամական ծանր պատասխանատուութիւնները արդէն իսկ մեծ համեմատութիւններու հասած են:

Քեֆա սինման, Նրուստի մի արտաքին հաղաբեանց մեր լուսադոյն շէնքերէն մին կործանած է բոլորովին: Այրուած են մեր մեծ պանդոկի ներքին եօթն խանութները: Պանդոկը որ մեր եկամուտի մեծագոյն աղբիւրներէն էր, պարապ է եւ ներկայիս կարելի չէ վարձու տալ:

Հրկիզուած են մեր Հրեշտակապետաց եկեղեցւոյ ետեւի խանութներէն վեցը եւ կոյսպետուած խորհուրդներ: Մեր կալուածոց վարձուց գանձումները դժուարութեանց մատուցած են եւ հետեւաբար մեր ընթացիկ առօրեայ ծախսը համար կը ներդրուին ծանրապէս:

Բացի օրինաւոր տուրներէն որոնք կառավարութեան կողմէ կը գանձուին անխափան, կը ստիպուին վճարել կարգ մը բացառիկ ու արտակարգ տուրներ որոնք ծնունդ առած են եւ կ'առնեն ներկայ կացութիւնէն:

Մեր պարապ շէնքերն ու խանութները պատշաճօրէն համար կը կառուցանենք առաջնայն պատեր: Վանքի բոլոր քաղաքը լեցուած ըլլալով, նորիկ աղէտեղանքներու տեղաւորման համար ստիպուած ենք փայտայ սնակներ կանգնել վանքի բակներուն ու անցներուն մէջ: Յարմարագոյն սնակները հետաւոր զինուորական կալաններու մէջ գտնուելով՝ մեծ ծախսերու պիտի ենթարկուին գանձող իրենց տեղերէն վերցնելու վանք փոխադրելու վերաբեցնելու եւ վերջէն դարձեալ վերցնելու եւ այլու փոխադրելու համար:

Ասոնց կարգի եւ անուղղակիորէն իբրեւ հետեւանք երկրի տագնապին, տարւոյս սկիզբներուն ունեցանք մի շատ ցաւալի աղէտ մը: Գերստմանի ձորին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ գերեզմանի հնազարեան եկեղեցին, որուն արտաքին գաւիթը եւ մուտքը դեռ մի քանի ամիս առաջ վերանորոգուած էին իրենց նախկին շէնքերէն մէջ, Յունաց պատերազմի տարւոյն հետ համագործակցաբար: Յունուս 5 ի դիւրեր յանկարծական տեղաշարժի առիտէն ներս հեղեղներու հեղեղներով լեցուցած: Խորհակուցան ճոր մուտքն ու գաւիթի պատը եւ ինչ որ կը գտնուէր ներսը եկեղեցւոյ մէջ: Ս. Կոյսի դամբարանը իր անոր առջեւի մեր Հերուստի քաղաւորի պատարագամասոյց Ս. Սեղանը, Յունաց եւ մեր միւս բոլոր պատարագամասոյց սեղանները, բոլոր իկոնները, իւզաների պատկերները, կանթիւները, զանիւր, պահաւաստը սեղանները, բոլոր իկոնները, իւզաների պատկերները, զանիւր, պահաւաստը սեղանները — նիւթական արժեքով մի քանի հազար ոսկիներու հասնող նուիրական իրերէն են:

Ասոնք բոլորը, բոլորը անխափան, պէժ է վերահաստատուին այդ մի քանի հազար ոսկիներու ծախսով: Որոշուած գումարին հիօղ կէսը, ինչ ալ որ ըլլայ, վճարելու պատրաստուր պիտի ըլլանք յառաջիկայ մի քանի ամիսներու ընթացքին: Միայն արտաքին բակի խորհակուած պատը որ մեր առանձին սեպհակաւորութիւնն է եւ անմիջապէս կառուցանելի՝ կը պահանջէ մօտ 1000 ոսկւոյ ծախս մը ներկայ զիններով:

Այս ստիպողական ու անհրաժեշտ ծախսերու տարւոյն մեր նուազած եկամուտներու առջեւ՝ ցոյց կուտայ Ձեր սիրելութեանց՝ քէ ինչու կը դիմենք Ձեր օգնութեան, պաշտօնականապէս կ'անդամաւորուէնք իսկապէս համար: »

Պաշտօնի մի Հայութիւնը անցեալ երեսուն տարիներու ընթացքին օրինակելի եղած է իր աշխատութեան եւ եկեղեցաւորութեան մէջ: Ազգային ընդհանուր եւ մասնակի հանգանակութիւններու մէջ միշտ մասնակցութիւն բերած է առաւելագոյն զոհաբերութեամբ:

Անոնց սերն ու համակարգերը Միությունը հանդեպ յառկապես ջերմ եղած է եւ հետեւաբար Ձեր մասնաւոր գնահատութեան արժանի:

Ներկայ դժբախտ պարագաներու ռակ իսկ այլ ոգիին շնորհիւ կատարած ենք հանգանակութիւն եւ գոյացուցած մօտ 1000 ոսկւոյ գումար մը: Յետոյ կազմած ենք ժառանգական աշխարհականներէ եւ վեց հոգեւորականներէ բաղկացած արժամատիւ համալսարանական Մարմին մը մեր նախագահութեան ռակ, յառաջիկայ ամիսներու դժուարութիւնները բաժնալու համար: Մարմինը ունի իր վարչական վերին համարադրու ժողովը՝ բաղկացած երեք հոգեւորականներէ եւ երեք աշխարհականներէ: յետոյ երեք գործադիր լաւանատուներ — Առողջապահական, Կարգապահական եւ Պարենաւորման, բաղկացած մէկ-մէկ հոգեւորական եւ յաջորդաբար երեք, չորս եւ հինգ աշխարհական անդամներէ:

Ըստ համալսարանական Մարմին մանրամասն լինութեան յաջորդ հինգ ամիսներու անխիստանութեան տրամսին (Մայիսէն — Սեպտեմբեր) 500 անձի պարէն պէտք է ապահովուի ծրուագիւմի համարձակ կարօտեաները սովորական վերջին համար: Այդ պարէնը այժմեան գիներով կ'արժէ 7000 պարէն. ոսկի եւ անոր կարեւոր մասը պէտք է ապահովուի մինչեւ Ապրիլի կէսերը, որովհետեւ Մայիս 15ին կը վերջանայ Հոգեւոր Պետութեան Վարչութիւնը եւ այլեւս անհնար կ'ըլլայ պարէն գտնել յառաջ գալիք քառասունը դրութեան պատճառաւ:

Բացի ծրուագիւմի այս 500 կարօտեաններէն Պաղեստինի միւս քաղաքներու եւ Երւշաղեմի մէջ եւս պիտի ունենանք նոյնչափ երէ ոչ աւելի կարօտեաններ, որոնք այդ աւանդութեան պէտք պիտի ունենան մեր օժանդակութեան: Այս հաշուով վերոյիշեալ 7000 ոսկւոյ գումարն ալ պիտի կրկնապատկուի:

Համալսարանական այս հաշուով նկատելի ունի միմիայն իսկական ու բացարձակ կարօտեաններ, անոնք որ ցարդ օրավարձով կամ առօրեայ եկամուտով միայն կ'ապրեցնէին իրենց ընտանիքը եւ գործադրութեան եւ այլ կորուստներու պատճառաւ մնացած են բոլորովին անոնք եւ անօգնական իրենց ընտանեկան պարագաներով միասին: Մնացեալները օրոնց մէջ է նաեւ Ս. Աթոռն իր Միաբանութեամբ (110 հոգի) ինչպէս դուք ալ պիտի թելադրէիք սեփական պիտի ըլլան իրենց իւրովը տակաւնուի:

Ուրեմն ինչպէս Ձեր նոյնպէս եւ մեր մտահոգութիւնը կեդրոնացած պիտի ըլլայ մեր ժողովուրդի գործաւոր եւ արհեստաւոր դասակարգի կարօտեաններու վրայ: Սբ. Պատուարժան Վարչութիւնը օժանդակեալ անոնց պարենաւորման անհրաժեշտ հոգը բաժնալու, օգնած կ'ըլլայ Ս. Աթոռն միաժամանակ եւ արգելի եղած կ'ըլլայ մեր ռակ աշխարհային որովհետեւ ինչպէս վեր իրական եւ օգտակար փառքերով ցոյց տուինք մեր իւրը պակասած է ռակ եւ կը վախճանք այրուի: Մեր այրուիլը՝ այրուիլն է ազգային արժեքներու, ազգային նշանակական իրաւանց եւ շահերու, այրուիլը պարտաւոր անգին ժառանգութեան...:

Անցեալ երկու ամիսներու ընթացքին Պաղեստինի կացութեան բարելաւման համար կարեւոր անձնաւորութիւններու կողմէ տրուած լաւատես յուսադրութիւնները ցարդ իրականացած չըլլալով՝ ցաւ ի սիրտ վստահի անապահովը ինչեղեններ Ձեր ականջներուն Սուրբ Սիոնի մեր բարձունքին: Վստահ թէ Բարեգործականի ոչ միայն մեզին այլեւ արեւմտեան մէջ պիտի լսուի ան եւ մենք պիտի ապրինք մեր զաւակներով անվստահ՝ փառաւորելու Աստուծոյ անուրբ եւ օրհնելու մեր սիրելի Բարեգործականը՝ վստահ հայրենաց եւ վստահ Սիոնի իր կատարած բարեգործութեան համար:

Մեր քաղաքային մասին՝ մեր ըսելիքը իր պարզութեան մէջ յայտնել յետոյ, կը սպասենք Ձեր անմիջական եւ հեռագրական օգնութեան եւ կը վստահանանք թէ անոր ծախսով մանրամասն հաշիւը պիտի ներկայացնենք Պատ. Վարչութեանը ի միամտութիւն:

Ի գիտութիւն Պատ. Վարչութեանը հարկ կը տեսնենք բացորոգապէս յայտնելու թէ Պաղեստինի Հայութիւնը արաւելապէս արհեստաւորներէ եւ ամսականաբար պատօժենաւորներէ բաղկացած ըլլալով՝ դժբախտաբար ներկայ քաղաքական եւ տնտեսական տիրութեանց եւ գործադրութեանց երեսէն պիտի չկրնայ զգալի չափով բաժնալ մեր ծանր բեռը: Արեւելապետները չենք կրնար ունենալ նաեւ մեր երկրի դրացնութեան մէջ գտնուող Հայ համայնութիւններ՝ ծանօթ պատճառներով: Հետեւաբար մեր ամբողջ յոյր Բարեգործականից վրայ է միայն եւ անկողնէ կը սպասենք այդ յոյսի իրականացման:

Կանխայայտ շնորհակալութեամբ եւ Հայրական սիրոյ ողջունելի եւ օրհնութեամբ

Մնամ ազօրաւոր

Կիրիւր Ա.

Պատրիարք Ս. Մուսաղեմի

5544/17

30 Ապրիլ 1948

Նորին Ս. Օծուրին

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա.

Վեհափառ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս
Վեհափառ Տէր եւ եղբայր մեր ի Քրիստոս,

Այսօր ընդունեցինք Ձեր Վեհափառութեան 24 Ապրիլ 1948 բուակիր եւ թիւ 35 Սրբառու կոնգրակը որով Ձեր Հայրական գործաւորից սիրտը կոչ կ'ուղղէ Ձեր Կաթողիկոսական թեմի բոլոր Գերապատիւ Առաջնորդներուն, պատուարժան Թեմական իշխանութիւններուն եւ հաւատարմաւ ժողովուրդին եղբայրական օգնութիւն փութացնելու իրենց ալիքեալ հաւաքասներուն Պապեսիին ներկայ բազմաթիւ օգնական ընթացքին:

Մեր եւ մեր Միաբանութեան ինչպէս նաեւ հնամասնաւական Մարմին եւ ժողովուրդեան ամենաշեմ երախտագիտութիւնը կը յայտնենք Ձեր Վեհափառութեան վեհանձն զգացումներուն եւ բարեհաճ կարգադրութիւններուն համար որոնք վստահ ենք պիտի թերեւցենք մեր ալիքեալներուն տառապանքները եւ քաջալերութիւն եւ սփոփանք պիտի ներշնչեն անոնց սիրտներուն եւ հոգիներուն մէջ:

Մեր առաջին նամակի բուակիսնեան առիթն Պապեսիին տալովորայր աւելի մեծ համեմատութիւններուն հասած ըլլալով բազմապատկուած են մեր ալիքեալներուն թիւը եւ նոյն չափով ալ մեր հնամասնաւական պատասխանատուութեան բեռները եւ մտահոգութիւնները:

Հայրապետի եւ Յովսէփի Հայրութիւնը Սրուսաղէմի Հայրութեան նման տեղահան եղած է գրեթէ ամբողջութեամբ վերջին յարձակումներուն ընթացքին կորսնցնելով իր ստացուածներուն մեծ մասը: Հայրապետի մէջ մօտ 300 հոգի ապաստան գտած են տեղւոյն Անկիլիան կիլիկեցւոյ ժամասան մէջ Սրուսաղէմի Անկիլիան Նպիսկոպոսի բարեհաճ արտօնութեամբ: Անոնց հետ հաղորդակցութեան մէջ մտած ենք արդէն բոլոր հնարաւոր միջոցներով օգնութեան հասնելու նպատակով:

Յովսէփիները հաւատուած են մասամբ մեր Ս. Գլխադիր նախակիրարանի եւ մանկապարտեզի տեղիներուն մէջ ինչպէս նաեւ մեր վանքին եւ ուրիշ ապահով վայրերուն մէջ: Կասկած չունինք թէ վստահուած են պաղեստինահայութեան միւս փոքրիկ համայնքներն եւս: Այնպէս որ գրեթէ ամբողջ պաղեստինահայութիւնը արհաւիրքներու սպառնալիքներուն մէջ կ'ապրի այսօր:

Սրուսաղէմի մեր ալիքեալներուն թիւը կրկնապատկուած է եւ այժմ վանքի եւ հայոց բաղնիքի մէջ ունինք մօտաւորապէս 3000 ապաստանեալներ: Անոնց մէջ կը գտնուին նաեւ տեղւոյս Հայ Կաթողիկ եւ Բաղդադական համայնքներէն տասներ: Աւելորդ է Ձեր Վեհափառութեան մանրամասնել թէ ինչ կը նշանակէ 10.000 հայութեան տեղահանութիւնը Պաղեստինի ներկայ պայմաններուն մէջ: Գուր ինչպէս նաեւ Ձեր թեմի պատուական հայու թիւը լաւ գիտէք այդ եւ գիտէք նաեւ թէ ինչ միջոցներով կարելի պիտի ըլլայ օգնութեան հասնել:

Մեր զատկական աւալ տաքարի այս սրբազան օրերուն զրկուած ուխտաւորներու երջանիկ ներկայութեան մեզի կը մնայ դառնալ անգամ մը եւս Ձեր Վեհափառութեան եւ Ձեր սիրտուն զաւակներուն ի Սիւրիա, ի Լիբանան եւ ի Կիպրոս, եւ ուխտաւորութեան նոր հրաւեր մը կարգաւ Ձեզ՝ ուխտի ելեք պիտի քանցէք ի Ս. Սրուսաղէմ Ձեր հոգիներով եւ սիրտերով ի խնդիր փրկագործութեան մեր Տիրոջ օրինակին հետեւելով մեմք ինչպէս մեր նախորդներուն հոգիները պիտի չմոռանանք Ձեր այդ ուխտագնացութիւնը:

Նղբայրական սիրոյ ողջունիւ

Մնամք աղօթակից

ԿԻՒՐՆԻ, Ռ.

Պատրիարք Ս. Սրուսաղէմի

5569/14

15 Յունիս 1948

Ազնուաւուի ՏԻԱՐ Գ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Ընդհանուր Տնօրէն Հ. Բ. Ը. Մ. Կեդրոնական Վարչութեան

Ի Նիւ-Յորք (Մ. Ն.)

Ազնուաւուի Տիար,

Պատիւ ունիմք տեղեկացնելու Ձեր սիրելութեան թէ ընդունած ենք Ձեր սահմանած Լ. Պ. 5000ի նպաստը ամբողջութեամբ: Նրախապարտ ենք սիրելի Բարեգործականին անսահմանօրէն:

Նկատի ունենալով Ձեր նպատակի ընդհանուր գումարը, մինչեւ այսօր մօտաւորապէս Լ. Պ. 4000 ռակիի արժողութեամբ պարեն եւ դեղորայք ապահոված էինք: Այժմ կարելիութիւն պիտի պիտի ունենանք ամբողջացնելու մեր զննումները յառաջիկայ ամիսներու անհրաժեշտ պէտքերուն համար:

Անցնող մէկ ամսուան փորձառութիւնը ցոյց տուաւ որ կարօտեալներու թիւը շատ անշի պիտի ըլլայ քան ինչ որ ինքնամասնութիւնը ենթադրած էր նախապէս եւ հետեւաբար նպատակ գործը անհրաժեշտաբար մեր ենթադրածէն շատ անշի ընդարձակ սահմաններու պիտի հասնի: Ս. Արոտոյս համար ուղղակի ոչ մէկ նպատակ տեսանք զարդ այնպէս որ մեր ունեցած պարէնով եւ խիստ խնայողութեամբ միայն կը կառավարուինք մինչեւ հասնին օգնութեան բարեւար ձեռքերը թող չսալու որ պարտքի ներանցներուն մէջ միտնուինք:

Մեր վնասներն ու կորուստները շատ են դժբախտաբար, առաջին առիթը երբ պայմանները ներքին պիտի կատարել ջանք անօրէն քննութեան եւ զննատեսութեան աշխատանքները, անմիջապէս վերաբնութեան սկսելու յառաջիկայ ձմեռնային եղանակէն առաջ:

Մայիս 15էն առիթն մեր Միաբանութեան եւ ժողովուրդի դատն փորձառութիւններու մասին գաղափար մը տալու համար Ձեր սիրելութեան կը ներկայացնենք հետեւեալ մանրամասնութիւնները:

